

ՊՐՈՖ. Ա. Մ. ՀԱՆԹԵՐ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

ՆԱԽԱԲԱՆ

Աստվածաշունչը Աստուծո ժողովրդի Գիրքն է կամ, եթե կուզեք՝ երկու «Ելք»-երի Գիրքը:

Հին Կտակարանում տրված է Աստուծո կողմից Իսրայելի ժողովրդի ընտրության պատմությունը, թե ինչպես Աստված Մովսեսի միջոցով Իսրայելին փրկեց եգիպտական գերությունից և նրան Իր ժողովուրդը դարձրեց Սինա լեռան ուխտով (Սա առաջին «Ելք»-ն է), և թե ինչպես հաջորդ դարերում էլ իր «ծառա մարգարեների» միջոցով նրանց առաջնորդ և ուղեցույց հանդիսացավ՝ օրհնությամբ և դատաստանով իրենց բարձր ճակատագրին նախապատրաստելու համար, և նրանց սրտում վառեց Մեսիական դարի երջանկության հույսը:

Նոր Կտակարանը աստվածային փրկագործական ծրագրի իրականացման պատմությունն է: Այն պատմում է, թե ինչպես Աստված Իր (փրկչական) նպատակն ի կատար ածեց՝ առաքելով Իր Մեսիա որդուն և նրա **Առաքելությամբ, Մահվամբ** և **Հարությամբ** սկիզբ դրեց Իր իշխանության: Սա երկրորդ «Ելք»-ն է (տես Ղուկ. Թ 31) և սա այն դեպքն է, որ մենք կոչում ենք «Քրիստոսի իրողություն»:

«Քրիստոսի իրողություն» ասելով մենք պետք է հասկանանք այն բոլորը, որ պայմանավորված է Հիսուս Քրիստոսի գալուստով: Այն է՝ Իր անձը, գործը և խոսքերը, ինչպես նաև Հարությունը, Հոգեգալուստը և Նոր Իսրայելի՝ ընդհանրական Եկեղեցու ստեղծումը:

Հարց է ծագում, թե ինչո՞ւ ենք Աստվածաշունչը այդպես դիտում: Որովհետև Հիսուս ինքը փրկչական ամբողջ պատմությունը այդպես նկատեց, ինչպես հաստատում է «Զար Մշակների» առակը (Մարկ. ԺԲ 1—12): Եթե միայն այսպես դիտենք Ավետարանը, կարող ենք հասկանալ Հիսուսի հետևյալ խոսքերը. «Մի կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. Ե 17):

Այստեղ անհրաժեշտ ենք համարում հակիրճ ձևով ներկայացնել Քրիստոսի իրողության պատմական ժամանակաշրջանը: Այն սկսվում է Հռոմի Տիբերիոս կայսեր իշխանության օրոք՝ Զաքարիայի որդի Հովհաննեսի ձեռքով կատարված մի մկրտությամբ: Մկրտվողների մեջ կար մեկը, որ ճանաչված էր որպես Հիսուս Նազովրեցի, երբեմն էլ՝ Որդի Մարիամի:

Նա ծնվել էր Հուդայի երկրի Բեթղեհեմ քաղաքում, մոտավորապես մ. թ. ա. 6

---

* Սքովտիայի Աբրդին համալսարանի Ս. Գրական քննադատության պրոֆեսոր Ա. Մ. Հանթերը իր «Ներածություն Նոր Կտակարանի աստվածաբանության» գրքում խոսում է Քրիստոսի իրողության, քրիստոնեական հավատքի առաջին քարոզիչների և առաջին մեկնիչների մասին:

Այս համարում հրատարակվում է սույն գրքի Ա գլուխը:

ԽՄԲ.

թվականին, Օգոստոս կայսեր իշխանության օրոք, երբ Հռոմեական խաղաղությունը (Pax Romana) տիրել էր ամբողջ աշխարհին: Նա մեծացել էր Գալիլիայի Նազարեթ քաղաքում, ծնողների հետ մասնակցել էր Երուսաղեմի տոնակատարություններին և սովորել հյուսնի արհեստը:

Մեզ հայտնի է, որ նա երիտասարդ հասակում ճանաչված էր Սուրբ Գիրքը մեկնելու հմտությամբ: Ավելի ուշ շրջանի Նրա խոսքերից և կենցաղից կռահում ենք, որ նա թեև բոլորի հետ վարվում էր բարեկամաբար, այնուամենայնիվ նա սիրում էր ամբոխից մեկուսանալ՝ խոկման և աղոթքի համար:

Մեծն Օգոստոսի մահվան ժամանակ, մ. թ. 14-ին, նա պետք է մոտավորապես 20 տարեկան լիներ:

Անկասկած իր ժամանակակիցներից շատերին տագնապեցրեց կայսեր մահվանը՝ վախեցնելով, որ Օգոստյան խաղաղությունը և կայսրության կարգն ու կանոնը նրանով վերջ կգտնի: Սակայն Հիսուս մտածում էր մի ուրիշ խաղաղության և մի այլ կայսրության մասին և սպասում ի լրումն ժամանակի:

Երբ մի տասնյակ կամ ավելի տարիներ հետո երկար ժամանակ լռած մարգարեության ձայնը կրկին հնչեց Հովհաննես Մկրտչի շուրթերից Հուդայի անապատում, Հիսուս գիտեր, որ իր ժամանակը հասել է:

Նազարեթից իջնելով Հորդանան, նա գնաց մկրտվելու Հովհաննեսից և սկսելու իր առաքելությունը, որի ընթացքում պիտի հոչակեր առավել հզոր մի թագավորություն, քան Հռոմեականն էր: Եվ պիտի պատմեր մի աշխարհի մասին, որը փրկված էր ոչ թե մի մարդու կողմից, որ աստվածացած էր՝ ինչպես Օգոստոսը կամ Տիբերիոսը), այլ Աստուծո կողմից, որ մարդացած էր: Որովհետև ինքն իսկ էր այդ մարդը, և նրանով էր պատրաստվում պատմության բեմը երկրորդ և առաջինից ավելի մեծ «Եղբ»-ի համար:

ԱԿՆԱՐԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քրիստոսի իրողությունը պահանջում է ծանոթանալ և ուսումնասիրել Արքայությունը և Մեսիան համատես Ավետարաններում:

Ինչո՞ւ ենք մենք դուրս թողնում չորրորդ Ավետարանը: Նրա՞ համար, որ նկատում ենք այն որպես մի աստվածաբանական մեկնություն, որը չի առնչվում պատմական իրադարձություններին: Ո՛չ: Թեև երբեմն ենթադրվում է, որ մեկնությունը անխուսափելիորեն որոշ խորթ տարրեր է ներմուծում պատմական տվյալների մեջ, բայց և այնպես կարելի է նաև մեկնությամբ ի հայտ բերել փաստերի ճշմարիտ իմաստը:

Մենք հավատում ենք, որ Հովհաննես ավետարանիչը հենց այս էր, որ կատարեց: Նաև ընդունում ենք, որ իր Ավետարանն ավելի հավաստի է պատմականորեն, քան մի ժամանակ ենթադրվում էր[1]:

Համենայն դեպս տարբերություն կա չորրորդ և առաջին երեք Ավետարանների միջև:

Մինչ համատես Ավետարանները աստվածաբանությունը զետեղում են պատմական հողի վրա, Հովհաննես ավետարանիչը պատմությունը զետեղում է աստվածաբանական շրջանակի մեջ (ինչպես վկայում է իր Ավետարանի նախաբանը՝ «Ի սկզբանէ էր Բանն...»):

Այդ տարբերությունը թեև աստիճանական է, բայց միաժամանակ՝ իրական: Այդ իսկ պատճառով մենք Ս. Հովհաննեսին դասում ենք «Քրիստոսի իրողության» մեկնիչների շարքին:

Գալով Համատես Ավետարաններին, դրանք նկատում ենք վավերական պատմական փաստաթղթեր: Այդ ասելով մենք չենք պնդում, թե այն ամենը, ինչ որ առկա են դրանցում, ճշմարիտ են (օրինակ՝ որոշ պատահարներ, որ միմիայն Մատթեոսի Ավետարանում ենք հանդիպում): Սակայն պնդում ենք, որ եթե Ավետարաններին մոտենանք ողջամիտ և չափավոր քննադատությամբ, ապա կունենանք Հիսուսի խոսքի և գործի հավաստի նկարագրությունը և հերքած կլինենք գերմանացի քննադատ Բուլտմանի[2] ծայրահեղ եզրակացությունները:

Անգլիայում, որպես արդարադատության սկզբունք, ընդունված է, որ մարդն անմեղ է, քանի դեռ չի ապացուցվել նրա հանցավոր լինելը:

Ուստի, հիշյալ սկզբունքից ելնելով, կարող ենք համատես Ավետարաններում Հիսուսին վերագրվող գործերը և խոսքերը կավերական նկատել այնքան ժամանակ, քանի դեռ տրամաբանական փաստարկներով հակառակը չի ապացուցվել:

---

[1] Մի շարք արևմտյան աստվածաբաններ անցյալ դարում մերժում էին Ս. Հովհաննեսի Ավետարանի պատմականությունը (թարգմանչի ծանոթություն):

[2] Բուլտմանն այն կարծիքին է, որ Ավետարանը հավաստի դարձնելու համար պետք է հրաժարվենք հրաշապատումներից: Այս մոտեցումը ինքը անվանում է Ավետարանի առասպելազրկում (ծանոթագրությունը մերն է—Ս. ա. Զ. և Ա. բ. Մ):

Ամաս
ՔՐԱՍՏՈՍԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ
1

Աստուծո Արքայությունը և Քրիստոսի Առաքելությունը

Ավետարանների էությունը համակվել է խոր առեղծվածով: Դա Երկնքի Արքայության և Հիսուսի Առաքելության միջև եղած հարաբերության առեղծվածն է: Եվ այս առեղծվածը հասկանալուց է կախված ամբողջ Նոր Կտակարանի ըմբռնումը:

Ո՞րն է համատես Ավետարանների տիրապետող թեման: Այս հարցը, ըստ մասնագետների, ունի միայն մեկ ճշմարիտ պատասխան՝ Աստուծո Արքայությունը[3]:

Հիսուս ձեռնարկեց Իր քարոզությանը այս թեմայով, և այս էր Իր առակների նյութը: Վերջին ընթրիքին սրա մասին խոսեց Իր աշակերտներին: Նա ապրեց, գործեց և մահացավ այս մտածությամբ:

Վերցնենք ամենավաղ գրված Ավետարանը: Մարկոս ավետարանիչը, Հովհաննես Մկրտչի առաքելությունը ներկայացնելուց հետո, պատմում է, թե ինչպես Հիսուս եկավ Գալիլիա և հայտարարեց. «Հասել է Աստուծո Արքայությունը»:

Այնուամենայնիվ երբ շարունակում ենք Մարկոսի Ավետարանի ընթերցումը, մեր առջև պարզվող պատմությունը մի մարդու մասին է՝ Հիսուս Նազովրեցու, որ իրեն կոչում է «Որդի Մարդոյ»՝ ըստ երևույթին շեշտելով իր մարդեղությունը:

Հովհաննեսից մկրտվելուց հետո Հիսուս քարոզում, ուսուցանում և բուժում է՝ սկզբում սինագոգներում, իսկ ավելի ուշ՝ Գալիլիայի լճափին, մինչև որ այնպիսի համբավ է ձեռք բերում, որ բացօթյա մի ճաշկերույթից անմիջապես հետո իր հետևորդները փորձում են նրան թագավոր կարգել[4]:

Այստեղ Հիսուս ոչ շատ հստակ պատճառով Գալիլիայից ճահանջում է Պաղեստինի հյուսիս-արևմտյան սահման:

Երբ վերադառնում է Փիլիպպյան Կեսարիա քաղաքի շրջակայք, գաղտնի խոսակցություն է ունենում իր տասներկու աշակերտների հետ Մեսիայի, Մարդու Որդու և մահվան մասին: Եվ վեց օր հետո խորհրդավոր դեպք է կատարվում մի լեռան գագաթի: Ապա կարծես անդառնալի որոշում արած, Հիսուս իր աշակերտների հետ ուղղվում է դեպի հարավ՝ Հուդայի երկիր և Երուսաղեմ: Այնտեղ, հրեական Զատկի մոտիկ օրերին տաճարը մաքրելուց հետո, ձերբակալվում է իր թշնամիներից, դատվում, դատապարտվում և խաչվում՝ մատնվելով իր տասներկու աշակերտներից մեկի կողմից: Մի քանի օր հետո խաչյալ մարդու ընկերները հայտարարում են, որ նա մեռելներից հարություն է առել:

Սա Մարկոսի Ավետարանի զարմանալի պատմությունն է՝ ներկայացված համառոտակի: Ինչպե՞ս կարող է այս պատմությունը Աստուծո Արքայությունը լինել: Սույն արտահայտությունն իսկ թելադրում է Աստուծո ողջ ուժի և փառքի դրսևորումը մի այնպիսի արքայական հեղինակությամբ, որպեսզի բոլորը ճանաչեն, որ նա Աստված է:

Իսկ մեր ամբողջ տեսածը, ըստ երևույթին, մի գալիլիացի մարգարե է, որ բացահայտում է ճշմարտությունն այնպես, ինչպես ինքն է հասկանում, և կնքում իր վկայությունը իր կյանքի արյունով, ինչպես բազմաթիվ հրեա մարգարեներ արել էին իրենից առաջ:

Ի՞նչ է այս առեղծվածի բացատրությունը: Արդյոք հնարավո՞ր է, որ Գալիլիացի մարգարեի կյանքն ու գործունեությունն իսկ և իսկ Աստուծո Արքայությունը լիներ:

Ակնհայտ է, որ մեր առաջին ամփոփումը պակասավոր է և անբավարար:

Պատմությունը լի է խորհրդաստ թելադրանքներով և պատահարներով, որոնք զանց առնելով՝ չենք հասկացել այն: Դարձյալ փորձենք՝ այս անգամ ջանալով ի հայտ բերել սույն կարևոր հանգամանքները:

Ա

Սկսենք Հիսուսի մկրտությամբ:

Պատմությունը, թե ինչ կատարվեց Հիսուսի հետ Հորդանանում, ինչպես նաև նրան հաջորդող փորձությունը, աշակերտներին պետք է հասած լիներ նույն ինքը Հիսուսից, քանի որ, ըստ Մարկոսի, ուրիշ որևէ մեկը չտեսավ կամ չլսեց այնտեղ կատարված իրապես կարևոր պատահարները:

Ի՞նչ էին դրանք: Նախ մի ձայն երկնքից ասաց Հիսուսին, երբ նա դուրս էր գալիս ջրից. «Դու ես Իմ սիրելի Որդին, որ ունես

---

[3] Հաշվարկումները հետևյալներն են. «Աստուծո Արքայությունը» Մարկոսի Ավետարանում հանդիսանում ենք 14 անգամ, իսկ Ղուկասի մոտ՝ 32: Մատթեոսի Ավետարանում «Աստուծո Արքայությունը» կրկնվում է չորս անգամ և «Երկնքի Արքայությունը» (որ նույն իմաստն ունի)՝ 33 անգամ:

[4] Հովհաննես Զ 15: Հովհաննես ավետարանիչը բացահայտում է այն, ինչ որ թաքնված է Մարկոսի Ավետարանում:

Իմ ամբողջ հաճությունը» (Մարկոս Ա. 11)[5]:

Ծառ նշանակալի խոսքեր են, երբ անդրադառնանք, որ գալիս են Սաղմոս Բ 7-ից և Եսայի ԽԲ 1-ից: Նրանք արտահայտում են՝ ա) Իսրայելի Մեսիական արքայի թագադրության բանաձևը, և բ) Տիրոջ ծառայի ձեռնադրության բանաձևը: Այս հատկանշական հարակցումը չի կարող պատահական լինել: Իր ճակատագիրն էր, որ Հիսուս տեսավ Մեսիական Արքայի և Տիրոջ խոնարհ Ծառայի մեջ: Իր մկրտության պահին Հիսուս գիտակցեց, որ կոչված էր Աստուծո կողմից Մեսիա-Ծառան լինելու, որ ծնվել էր արքա, բայց և չարչարվելու համար:

Մյուս արտակարգ երևույթը՝ Աստուծո Հոգու իջման տեսիլքն էր Իր վրա մկրտության պահին: Կրկին հիշում ենք Եսայի մարգարեի խոսքը Ծառայի վերաբերյալ. «Ես Նրան տվեցի իմ Հոգին» (Ես. ԽԲ 1):

Ի՞նչ է նշանակում Ս. Հոգու էջքը:

Դա նշանակում է, որ այդ պահից սկսած Հիսուս իմացավ, թե Եսայի մարգարեի խոսքը իր համար էր ասված. «Տիրոջ Հոգին իմ վրա է, դրա համար իսկ ինձ օծեց» (Ես. ԿԱ 1, Ղուկ. Դ 18):

Մենք հակում ունենք Ս. Հոգին պատկերացնել որպես կենսատու լույս: Աստվածաշունչը այն ներկայացրել է որպես ստեղծարար ամենակարող ուժ, մի ուժ, որով Աստված է գործում: Ուրեմն Ս. Հոգու էջքը նշանակում է Հիսուսի սպառազինվելը աստվածային զորությամբ: Այստեղ մենք կարող ենք գտնել գաղտնիքը Քրիստոսի հեղինակության ակներև շեշտի, որ առկա է Նրա հետագա խոսքերի և գործերի մեջ:

«Մեսիա Ծառայի ձեռնադրությունը»՝ ահա ողջ եղելության իմաստը՝ արտահայտված մեկ նախադասությամբ:

Բ

Մի կողմ թողնելով Քրիստոսի փորձությունը[6], ուսումնասիրենք այն խոսքերը, որոնցով Հիսուս սկսեց Իր քարոզությունը Գալիլիայում. «Լրացել է ժամանակը, և հասել է Աստուծո Արքայությունը. ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավետարանին» (Մարկ. Ա. 15): Լավ հասկացված, զարմանալի խոսքեր են սրանք: Այն մի ազդարարություն է, որ մարդիկ ապրում են պատմական բոլորովին յուրահատուկ պահ, և թե Աստված նրանց հետ ստեղծում է հարաբերությունների մի նոր շրջան:

„Καιρός" հունարեն բառը այստեղ թարգմանված է «ժամանակ», որ նշանակում է նախասահմանված ժամանակ: Աստուծո խորհուրդների մեջ այս ի՞նչ ժամանակ է: Աստուծո իշխանության և բարի լուրերի (ավետման) ակնարկությունները հուշում են, որ պատասխանը կարելի է գտնել Եսայի ԾԲ 7 և Խ 9 համարներում:

Կես հազարամյակ առաջ Բաբելոնացի Եսայի մարգարեն կանխագուշակեց տարագիրների վերադարձը: Նա տեսավ նրանց հաղթական վերադարձը Երուսաղեմ՝ Աստծուն իրենց մեջ ունենալով, և իրենից առաջ գնացող բարի լուրերով մի ավետաբերի: Ամբողջ Երուսաղեմը պատկերվում է պարսպի պատերի վրա, երբ հանկարծ բլրի գագաթից երևում է ավետաբերը: «Իբրև զի զեղեցիկ են ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւուն խաղաղութեան, իբրև աւետարանչի բարութեանց, զի լսելի արարից զփրկութիւն քո, ասել ցՍիոն թէ թագաւորեացէ քեզ Աստուած» (Ես. ԾԲ 7):

Եսային ակնկալում էր, որ Աստուծո իշխանության այս Օրը շուտով կիրականանա: Բայց Աստուծո նախախնամությամբ այս մեծ հույսի իրականացումը ուշացավ հինգ դար: Այն կատարվեց միայն Հռոմեացի Տիբերիոս կայսեր օրոք, երբ Հիսուս, երևալով Գալիլիայում, հայտարարեց. «Եսայի մարգարեի կանխագուշակած ժամանակը հասել է»:

Եթե առաջին եղելությունը մեկնաբանելիս ասացինք, որ սա Մեսիա Ծառայի ձեռնադրությունն է, այժմ ավելացնում ենք. «Աստուծո Իշխանությունն սկսված է»:

Գ

Այժմ նկատի ունենանք Գալիլյան առաքելությունը: Մենք հակված ենք այն նկատել քարոզության և ուսուցման մի խաղաղ շրջան՝ ի հակադրություն Հուդայի երկրում Հիսուսի հետագա գործունեության, երբ խաչին ընդառաջ է գնում, որը և հենց Իր Չարչարանքի և Գործունեության ժամանակն է: Բայց նախնական ժամանակը մենք սխալ պիտի հասկանանք, եթե այն պատկերացնենք որպես խաղաղ մի հովվերգու-

[5] Ավետարանական բոլոր մեջբերումները կատարված են 1975 թ. Մայր Աթոռում լույս տեսած Նոր Կտակարանի աշխարհաբար թարգմանությունից:

[6] Տես **Թ. Ու. Մենսոն**, Դառա Մեսիան, էջ 57: Նա մատնանշում է, որ երեք փորձություններից յուրաքանչյուրում Մեսիան հրավիրվում է գրավելու գլխավոր տեղը: Ամեն անգամ Հիսուս Իր պատասխանով Ատծուն է տալիս գլխավոր տեղը: Եզրակացությունը պարզ է. նույնիսկ Մեսիան միմիայն Աստուծո ծառան է. հենց Մեսիա լինելու պատճառով Նա պետք է ամենից առաջ Աստուծո ծառան լինի:

թյուն, որտեղ Վարդապետի հմայիչ իմաստությունը ներդաշնակվում էր Գալիլիայի գողտրիկ բնության հետ: Այսպիսի մի պատկեր կարող ենք կազմել միայն այն ժամանակ, երբ անտեսենք հրաշքները, առակները մեկնաբանենք միայն որպես գրավիչ բարոյական պատմություններ և վախճանաբանական ասացվածքները դատարկենք իրենց իմաստից ու խորհրդից: Քրիստոսի առաքելության մեջ խաղաղություն կար, բայց առավել ևս կար սրբազան պատերազմ ընդդեմ չար ուժերի:

Մենք պետք է Գալիլյան առաքելությունը պատկերենք գործո՛ն շարժման մեջ և ո՛չ թե լճացած, մարտակա՛ն, ո՛չ թե հովվերգական: Հիսուս ասաց. «Կարծում եք, թե երկրին խաղաղությո՞ւն տալու եկա, ոչ... այլ երկրի վրա կրակ գցելու» (Ղուկ. ԺԲ 49—51):

Նա սկսում է Իր առաքելությունը՝ հայտարարելով, որ ուղարկված է գերիներին ազատելու (Ղուկ. Դ 18—19): Իր գործունեությունը համեմատում է Ուժեղին (սատանային) կապելու ավելի Հզորի կողմից (Ղուկ. ԺԱ 22): Վերադարձող յոթանասուներկու աշակերտներին ասում է. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը» (Ղուկ. Ժ 18): Իր առակները մարտական զենքեր են և Իր հրաշալի գործերը՝ հաղթության նշաններ՝ չար ուժերի դեմ մղած պայքարում: Իր ողջ առաքելության ընթացքին զգացվում է սարսափազդու ճգնաժամային մի տագնապ, տագնապ, որի արդյունքը լինելու է օրհնություն կամ դատաստան այս սերնդի համար (Ղուկ. ԺԲ 49—59, ԺԳ 1—5):

Երբ միայն այսպես դիտենք Գալիլյան առաքելությունը, ուղիղ կընկալենք այն: Պայքարի գլխավոր հերոսը ոչ թե մի մեծահոգի ուսուցչի պատկեր է, որ համբերությամբ բազմություններին հաղորդում է հավիտենական իմաստության ճշմարտություններ, այլ Աստուծո հզոր Որդին, որն Իր Հոր սպառազինությամբ զինված ղեկավարում է հարձակումն ընդդեմ սատանայի և նրա բոլոր չար գործերի՝ կոչ անելով մարդկանց որոշել, թե ճակատամարտում որի՞ կողմն են կանգնած: «Ո՛չ ոք, որ իր ձեռքը մաճի վրա է դնում ու ետ նայում, հարմար է Աստուծո արքայությանը» (Ղուկ. Թ 62): «Թող որ մեռյալները թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնա-քարոզիր Աստուծո արքայությունը» (Ղուկ. Թ 60): «Աստուծո արքայությունը ձեր մեջ է» (Ղուկ. ԺԷ 21): «Երկնքի արքայությունը բռնադատվում է» (Մատթ. ԺԱ 12): «Եթե Աստուծո ձեռքով եմ հանում դևերին, ապա Աստուծո արքայությունը հասել է ձեր վրա» (Ղուկ. ԺԱ 20): «Ահա դևեր եմ հանում, բուժումներ եմ կատարում այսօր և վաղը, իսկ երրորդ օրը ընթացքս կավարտեմ» (Ղուկ. ԺԳ 32):

Ուրեմն մեր երրորդ ուսումնասիրությունը ցույց է տալիս Երկնքի Արքայության պատերազմը ընդդեմ չարիքի թագավորության՝ Հիսուսի առաջնորդությամբ: Ետադարձ հայացք գցելով Հիսուսի Առաքելության վրա, բուզում տարիներ հետո Ս. Հովհաննեսն այդ այսպես նկատեց. «Աստուծո Որդին հենց նրա համար հայտնվեց, որպեսզի քանդի սատանայի գործերը» (Ա Հովհ. Գ 8):

Դ

Այժմ անցնենք Փիլիպպյան Կեսարիա (Մարկ. Ը 27—33): Քրիստոսի Առաքելությունը Գալիլիական ընթրիքին արդեն հասել էր իր գագաթնակետին, երբ ժողովրդական խանդավառությունը հատկապես շատ բարձր էր: Այնուհետև, հավանաբար փախուստ տալով իր բարեկամների վտանգավոր ոգևորությունից, Հիսուս հեռանում է դեպի Պաղեստինյան հյուսիս-արևմտյան սահման (Մարկ. Է 24): Իսկ Գալիլիայում սկսված ճակատամարտը պետք է ավարտվեր Երուսաղեմում (Ղուկ. ԺԳ 32 և հաջ.): Ուստի Հիսուս, դեռ ճանապարհ չընկած դեպի հարավ, ուզում էր վստահ լինել՝ արդյո՞ք Իր աշակերտները հասկանում են, թե ինչ է կատարվում: Փիլիպպյան Կեսարիայի առանձնության մեջ Հիսուս հարցնում է. «Մարդիկ ի՞նչ են ասում իմ մասին, թե ո՞վ եմ ես»: Նրանք պատասխանում են, որ ժողովուրդը տարբեր կարծիքներ ունի: «Իսկ դուք,—մոտիկից հարցաքննելով աշակերտներին,—ի՞նչ եք մտածում»: Անմիջապես Պետրոսը բարձրաձայն հայտարարում է այն, ինչ որ բոլորի մտքում էր. «Դու Մեսիան ես»: Ճիշտ պատասխա՞ն է այս: Այո՛, և Հիսուս լռելյայն ընդունում է այդ և ավելացնում. «Մարդու Որդին նախ պետք է չարչարվի և մեռնի, որպեսզի հաղթանակի»:

Ուշադրություն դարձրեք, որ Նա օգտագործում է «Մարդու Որդի» արտահայտությունը և ոչ թե «Մեսիան»: Առաջին անգա՞մն էր, որ այդ անունը գործածեց: Դրանում վստահ չենք. ինչին որ կարող ենք վստահ լինել, այն է՝ «Մարդու Որդին» արտահայտությունը պարզ բանաստեղծական հոմանիշ չէ «մարդ» բառի, ինչպես մի ժամանակ ենթադրում էինք: Ընդհակառակը, դա համարյա ամենահավակնոտ ձևն էր ինքն իրեն ներկայացնելու, որ Հին Արևելքում որևէ մարդ կարող էր օգտա-

գործել»[7] (Եթե այն «մարդ» թարգմանենք, պետք է մեծատառով գրենք «Մարդ»): Որովհետև «Մարդու Որդին» մի տիտղոս է, որ ծագել է Դանիելից (Դանիել Է 13): Նա մի խորհրդավոր մարդ է, որ Իր թագավորությունը Աստծուց է ընդունում, և նրան վիճակված է իշխել, ինչպես Աստծուն է վայել: Այս փառահեղ կերպարի հետ է նույնացնում Ինքն Իրեն Հիսուս, բայց միաժամանակ պնդում է, որ Իրեն սպասվում է չարչարանք և մահ, որովհետև Աստված այդպես է կամենում: Պետրոսի համար, որ հույսը դրել էր հաղթական Մեսիայի վրա, այդ գաղափարն իսկ անընդունելի է, որի համար էլ հանդիմանում է Հիսուսին, բայց դրան հաջորդում է Տիրոջ խստագույն կշտամբանքը: Պետրոսը մեսիականությունը պատկերացնում է մարդկային և ոչ թե աստվածային մոտեցմամբ:

Հիսուս դրանով ուզում է ասել. «Ով Պետրոս, դու անտանելի՞ ես գտնում տառապող Մեսիայի մտածումն իսկ: Այնուամենայնիվ, Աստուծո իշխանությունը այդպես է գործում, և թեև Ես Աստուծո Որդին եմ, այդ ճանապարհով պիտի քայլեմ, որ պատրաստված է Տիրոջ Տառապող Ծառայի համար: Այլ ճամփա չկա, և դու էլ պետք է պատրաստ լինես կիսելու իմ ճակատագիրը» (Մարկ. Ը 34):

Վեց օր հետո տեղի է ունենում մի այլ եղելություն (Մարկ. Թ 2—8), որ մոտիկից առնչվում է Պետրոսի խոստովանությանը, բայց այնքան խորհրդավոր, որ մինչև այսօր չգիտենք ինչպե՞ս սկսենք այդ բացատրել: Մինչ լեռան գագաթին աղոթում էր[8], ներքնական ճառագայթումով պայծառակերպվում է: Աներևույթ աշխարհից երևում են Մովսեսն ու Եղիան, որոնք զրուցում են Իր հետ «Երուսաղեմում կատարվելիք ԵԼՔԻ և ՓՐԿՈՒԹՅԱՆ խորհրդի մասին», ասում է Ղուկասը: Եվ այլայլված աշակերտները լսում են մի աստվածային ձայն, նույն ձայնը, որ լսվեց Հիսուսի Մկրտության պահին,—որ նրանց վստահեցնում է. «Դա է Իմ Ընտրյալ Որդին, Նրան լսեցեք» (երկու Մեսիական տիտղոսներ):

Ուրեմն մեր չորրորդ ուսումնասիրությունը եզրակացնում է. «Վերջին ճակատամարտը Աստուծո Արքայության և չարիքի թագավորության միջև պետք է տեղի ունենա Երուսաղեմում. և այնտեղ մահանալու է Աստուծո Մեսիան»:

[7] **Ստ. Ստեփ.**, «Աստվածաբանություն Նոր Կտակարանի», էջ 108:

[8] Այս ղուկասյան մանրամասնությունները լուսաբանում են Մարկոսի նկարագրությունը:

Ե

Իսկ այժմ անցնենք Երուսաղեմի վերջին շաբաթվա դեպքերին և Վերջին Ընթրիքին:

Հիսուս մուտք է գործել Սուրբ Քաղաք «համեստ փառքով»: Նա մաքրել է տաճարը, նաև կանխատեսել Նրա կործանումը: Բեթանիայի մի տան մեջ անհայտ անունով մի կին, կոտրելով անուշաբույր արժեքավոր յուղ պարունակող սրվակը՝ օծել է Նրան Իր մահվան համար:

Այժմ հինգշաբթի գիշեր է. Վերնատան մեծ սենյակի անդորրության մեջ Հիսուս հանդիպում է տասներկու առաքյալներին, միատեղ մի վերջին ընթրիքի համար. (Մրկ. ԺԴ 22—25, Ա Կորնթ. ԺԱ 23 և հաջ.):

Հասկանալու համար կատարվելիքը, վերհիշենք որոշ հանգամանքներ: Եթե հավաքման առիթը ընթրիքն է, ապա նախորդող մի այլ ընթրիք Հիսուսին ծառայել է որպես Աստուծո արքայության նմանության պատկեր (Բազմությունների կերակրելը, Ղուկ. ԺԴ 16—24): Ավելին, այս մասնավոր ընթրիքը Հրեական Զատկի նախօրյակին է տեղի ունենում, կամ հենց Զատկի օրը: Սհա Զատիկը հիշատակությունն է Աստուծո Մեծ գործի, որով առաջին Ելքը (ազատումը) կարելի դարձրեց և Իսրայելին[9] համարեց Աստուծո Ընտրյալ Ժողովուրդ՝ Սինա լեռան վրա արյունով կնքված մի ուխտով: Բայց Հիսուս, հայտարարելով, որ հրեաները այլևս Աստուծո ժողովուրդը չեն, բանիվ և գործով խոստացել էր մի Նոր Իսրայելի ստեղծումը: Բաց այդ չկայացած, Մարդու Որդին պիտի մեռներ իբրև Աստուծո Ծառա՝ «շատերի փրկության համար» (Մարկ. Ժ 45) և Իր Չարչարանքը պիտի նմանեցներ մի «Գավաթի», որից պետք է խմեր, մի Գավաթ, որից և Իր աշակերտներն էլ խմելու էին (Մարկ. Ժ 38):

Այժմ տեսնենք, թե ի՞նչ է անում Հիսուս. նախ վերցնում է մի հաց, կտրում և տալիս Իր աշակերտներին՝ ասելով. «Այս Իմ Մարմինն է, (որ ձեզ համար է)»: Ապա նրանց է տալիս կարմիր գինիով Գավաթը ու ասում. «Այս Գավաթը Նոր Ուխտի Իմ Արյունն է», և հրավիրում է, որ ուտեն ու խմեն: Այս ի՞նչ է նշանակում:

Հիսուս հրամցնելով հացն ու գինին, աշակերտներին տալիս է Աստուծո արքայության մի երաշխիք, որը շուտով գալու է «Զորությամբ»՝ Իր զոհաբերվելով: Կտրված հացը և թափված գինին ներկայացնե-

[9] Այստեղ **Իսրայել** պետք է հասկանալ ժողովուրդ սոումով:

լով որպես Իր Մարմինն ու Արյունը, Նա ոչ միայն պնդում է, որ Իր անձի մեջ մարմնավորում է այդ թագավորությունը, այլև վեմ խորհրդանշանով պատկերում է Իր կյանքի այն զոհաբերությունը, որ կատարելու է «շատերի համար»: Մեր այսպիսի մեկնաբանությամբ Իր՝ Խաչյալ Քրիստոսի զորությանը մասնակից է դարձնում աշակերտներին՝ նրանց մատուցելով Հացն ու Գինին:

Նոր Ուխտը (Երեմ. ԼԱ 31 և հաջ.), որ պետք է վավերացվի Ծառայի մահվամբ (Եսայի ԽԲ 6, ԽԹ 8, 53), խորհրդանշական կերպով բացվել է և իրապես մի քանի ժամից պետք է կնքվի արյամբ: Այսպես՝ Մեսիա Ծառայի աշխատանքը, որ սկսվեց Հորդանանում ջրով մկրտությամբ, Գողգոթայում՝ արյան մկրտությամբ հասնելու է իր վախճանին, այն մկրտության, որի բարիքներին շատերը մասնակից պիտի լինեն:

Ուստի հինգերորդ պատահարն իր էության մեջ՝ կատարված մարգարեական մի նշան է, որով Հիսուս ասում է. «Ես խոստանում եմ ձեզ Աստուծո Արքայությունից մի բաժին, որը գալու է շուտով զորությամբ՝ Մեսիա Ծառայի մահվամբ»:

Զ

Մի վերջին ակնարկ նետենք Հիսուսի վրա: Նա մատնված և ձերբակալված՝ կանգնել է քահանայապետի առջև: «Դու Մեսիա՞ն ես», հարցնում է Կայափան. «Ես եմ», պատասխանում է Հիսուս, «և պիտի տեսնեք Մարդու Որդուն՝ Զորության Աջ կողմում նստած և երկնքի ամպերի վրայով եկած» (Մարկ. ԺԴ 61 և հաջ.):

Այս Իր Առաքելության նկատմամբ Հիսուսի անհաղթահարելի հավատքի վերջին խոստովանությունն է, և Նա արտահայտվում է Դանիել մարգարեի խոսքերով. «Ահա եկավ ամպերի վրայով Մարդու Որդու նման՝ գալով ամենահին օրերից, կանգնեց Նրա առջև, ու իրեն տրվեց իշխանություն, փառք և թագավորություն» (Դանիել Է 13—14):

Այսպես, ի հեճուկս Իր դատի ակնհայտ կորստի, Հիսուս կանխատեսում է Իր հաղթանակը: Իր մարգարեությունը դեպի երկիր մի երկրորդ գալուստ չէ, այլ արդարացում և գահակալություն: Նա պիտի ընդունվի ամենաբարձր տեղը, որ երկնքում կա, և նրանք պիտի տեսնեն Իր այս բարձրացումը և հաղթանակը (Սաղ. ՃԺ 1):

Ուրեմն այս վերջին ուսումնասիրության մեջ Հիսուս ասում է. «Մեսիա Ծառայի հաղթանակն ապահովված է»:

Մեսիա Ծառան արդարացա՞վ: Տիրոջ հաճությունը Իր ձեռքի մեջ պտղաբերե՞ց: Եվ Նա «Երկարացրե՞ց Նրա օրերը»:

Մենք Հարության մասին հետո պիտի խոսենք: Մինչ այդ տեսնենք, թե Հիսուսի պատմությունն ինչպե՞ս է ներկայանում այս ուսումնասիրությունների շարքից հետո:

Մենք փորձեցինք ամբողջացնել պարզ ուրվագիծը, որով սկսեցինք՝ շեշտը դնելով «խոր իմաստով լի թելադրանքների և պատահարների վրա», և դրանք բացատրեցինք խորապես աստվածաբանական մեկնությամբ: Որպես արդյունք մենք հանգեցինք երկու շատ կարևոր եզրակացության:

1. Մենք չենք կարող ներկայացնել Հիսուսի պատմությունը՝ առանց աստվածաբանության և հատկապես վախճանաբանության դիմելու: Առանց աստվածաբանության՝ պատմությունն անըմբռնելի է: Եվ աստվածաբանության մեծ մասի բանալին գտնվում է Հին Կտակարանում, հատկապես Եսայի մարգարեի՝ Տիրոջ Ծառայի Երգերում և Դանիելի Է գլխում:

2. Երկրորդ եզրակացությունը պակաս կարևոր չէ: Մեր ուսումնասիրությունները երկու հարցեր պարզեցին.

ա) Հիսուս հավատում էր, որ Աստուծո Արքայությունը ներկա է Իր Անձի և Գործունեության մեջ, ներկա՝ որպես «խորհուրդ» (Մարկ. Դ 11), և իրապե՛ս՝ գործոն կերպով ներկա:

բ) Նույն հստակությամբ տեսավ Իր Մեսիական առաքելությունը Հորդանանից մինչև Գողգոթա, որպես Տիրոջ Ծառայի մարգարեությունների իրականացում:

Նշված Ա և Բ կետերը համատեղելու արդյունքը մի անլուծելի առեղծված է առաջացնում, մի պարադոքս, որը, ինչպես գիտենք, ծանր շփոթություն մատնեց աշակերտներին և, հիրավի, հստակ դարձավ միայն Տիրոջ Հարությունից հետո: Կրկին ու կրկին Հիսուս փորձեց նրանց այդ ճըշմարտությանը իրազեկ դարձնել, հատկապես Երուսաղեմ տանող ճանապարհի վրա (ինչպես վկայում է Մարկոսը Ժ 42—45 համարներում): Այն, ինչ Նա փորձում էր ըմբռնել տալ նրանց, Մեսիական գաղտնիքն էր, գաղտնիքը՝ ոչ թե Ո՞Վ է Մեսիան (այդ նրանք կռահել էին), այլ՝ թե Ի՞ՆՉ պետք է անի և տառապի:

Բայց ո՞րն է Գաղտնիքը, Խորհուրդը: Բանն այն է, որ աստվածաբանական լեզվով բանաձևված՝ «Իրականացված Վախճանաբանության» իմաստը և Հիսուսի Մեսիական Առաքելության իմաստը նույնանում են: Ավելի պարզ ասած՝ Հիսուսի Գործունեությունը, որպես Մեսիա-Ծառա, Հոր-

դանանից Գողգոթա, **նույն ինքն Աստուծո Արքայությունն է,** Աստուծո Գործունեությունը՝ Իր Արքայական Զորությամբ. Աստված այցելում է Իր Ժողովրդին և փրկում նրան:

Արքայությունը երկրային մի կայսրություն չէ, որ կարելի լիներ հիմնել քաղաքական ուժով, այլ մի Թագավորություն, որ Աստված է ղեկավարում Փրկագործությամբ՝ Քրիստոսի Առաքելության միջոցով: Առաքելության վրա մի հավելյալ բան չէ այն, այլ նույն ինքը Առաքելությունը:

Հիսուսի՝ Ծառա Մարդու Որդու Զարչարանքը և Զոհաբերությունը ոչ թե միայն հաղթանակի նախաբանն է, այլ նույն ինքը հաղթանակը, մի հաղթանակ, որ Տիրոջ Հարությամբ պարզ և հայտնի պիտի դառնա: Ս. Հովհաննես ավետարանիչը շուրջ կես դար հետո հստակորեն տեսավ, որ Հիսուսի «Փառք»-ը կայանում է **Խաչի** մեջ: Բայց առաջին ավետարանիչներն էլ անտեղյակ չէին այս իրողությանը և իրենց քարոզներում ասացին, որ Հիսուսի Առաքելությամբ, Մահվամբ և Հարությամբ Աստուծո Արքայությունը եկած էր[10]:

Անգլերենից թարգմանեցին՝

Ստեփանոս աբեղա Զաքալյան
Աթանաս քահանա Մովսիսյան

---

[10] Առաքյալները հետևյալը հոչակեցին.

ա) Մարգարեությունները կատարվել են.

բ) Քրիստոսի Իրողությամբ Նոր Դարաշրջան սկսվեց.

գ) Ուրեմն՝ ապաշխարեցեք և հավատացեք:

Հիսուս հոչակել էր.

ա) Ժամանակը հասել է.

բ) Աստուծո Արքայությունը եկել է.

գ) Ուստի ապաշխարեցեք և հավատացեք:

Երկու հայտարարությունների մեջ էլ վերոհիշյալ Ա. և Գ. կետերը նույնանում են: Իսկ երկրո՞րդը. Մեսիա Հիսուսի գործունեության, Մահվան և Հարության հոչակումը եկավ փոխարինելու Աստուծո Թագավորության հոչակմանը: Հազիվ թե որևէ այլ բացատրություն ավելի հստակ ցույց տա մեր եզրակացության ճշմարտացիությունը: